

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3165



9(47925)
4-33

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԱՆ

9(47.925)

4-33


VI



2653

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀՈԳԻՆ ՎԱՐԴԱՆ»

3372



ՅՈՎԱՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՆԴԵՐԶ ԱՄԵՆԱՅՆ
ՄԻԱԲԱՆԵԼՈՎՔՍ՝

ՄԻՀՐԵՐՍԵՀԻ ՄԵԾԻ ՀԱԶԱՐԱՊԵՏԻԴ

ԱՐԵՍՑ ԵՒ ԱՆԱՐԵՍՑ



26355-4.2

Այն է նեմարիս Ասուած՝ բոլորեցունց մեր արարիչ, զոր դու աներեսանակ արձակ բերանով՝ անան աներկեղ համարձակ հայտոյես... Այլ մեք այսպէս զիտեմք զԱսուած, եւ ՚ի սոյն հաւատամք ՚ի յաներկբայս:

Եւ որ արար զաշխարհս, նոյն եկն եւ ձնաւ ՚ի սուրբ կուսեն Մարիամայ... Էր Ասուած նեմարիս, եւ եղեւ մարդ նեմարիս... Քանձրացաւ յանարաս կուսեն, եւ ձնաւ եւ պատեցաւ ՚ի խանձարուրս եւ եղաւ ՚ի մտուր, եւ արժեացաւ զմոզան յարեւելից յերկրպագութիւն. սնաւ իբրեւ զսոյալ կարամբ, անեաց եւ մեծացաւ անս երեսուն, մկրեցաւ ՚ի Յովնանէն ՚ի յանլորդոյն ՚ի Յորդանան զեւ: Արար նեանս մեծամեծս եւ զարուեսսս ՚ի մեջ Հրեիցն. մասնեցաւ ՚ի բանանայից, դասապարտեցաւ ՚ի Պիղատոսէ պոնդաւոյ: Խաչեցաւ, մեռաւ, բաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի. երեւեցաւ երկոսասան աշակերտացն եւ այլոց բազմաց աւելի բան զնինց հարիւրոցն: Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս բառասուն՝ վերացաւ յերկինս ՚ի լեռնէն ձիթենեաց յանդիման իւրոց աշակերտացն, եւ եւ նստաւ ՚ի հայրենի արոն: Խոսացաւ երկրորդ անգամ զալ անաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զբոլոր աշխարհս, անել դասասան արդար ՚ի մեջ արդարոց եւ մեղաւորաց, զալ պարգեւս արժանաւորաց, եւ հասուցանել պատիծս չարագործաց՝ որ այսմ ամենայնի բարեբարութեանց ոչ հաւատան:



(ՂԵՒՈՆԳ ԵՐԷՅ)

Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեւեսակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ եւն դառն հարուածք: Ամենայն ինչք եւ ստացուածք մեր ՚ի ձեռս քո, եւ մարմինք մեր առաջի քո կան. բոս կամաց քոց արա զինչ եւ կամիս քեք սովին հաւանովք բողոս, ոչ յերկրի այլ քեք փոխանակեմք ընդ քեք, եւ ոչ յերկինս այլ Ասուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Ասուած բայց ՚ի նմանէ: Ապա եքէ յես այս մեծի վրկայաւ-

Հանրապետության
Գոս. Библиотека
ՀՍՍՌ-Արմ.ՍՍՐ
И. М. Мясникова

5813-57

բեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք, զբոլոր մարմին սեւալ 'ի ձեռս Բո, վաղվաղակի արա զինչ եւ կամիս: 'ի քէն անշանք, եւ 'ի մէնջ յանձնառութիւնք. սուր Բո, եւ պարանոցք մեր: Չեմք ինչ լաւ մեք էան զառաջինան որ յայտ վկայութեան վերայ եղին զինչս եւ զսացուածս եւ զմարմինս իւրեանց:

Ձի եքե անմանք իսկ ետք, եւ մարք եր մեզ մեռանել վասն սիրոյ Քրիստոսի, արժան եր. էանգի եւ նա անման եր, եւ այնչափ սիրեաց զմեզ, մինչեւ ման 'ի յանձն էառ, զի եւ մեք նորա մահուամբն յաւիտեական մահուանէն աստեցուց: Եւ եքե նա յիւր յանմանութիւնն ոչ ինչայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամօք յանձն առցե զմեզ յիւր յանմանութիւնն. մեռցուք իբրեւ զմահկանացուս, զի րնկալցի զմեր մահն իբրեւ զանմահից:

Այլ դու յայտ ամենայնի այլ զմեզ մի' հարցաներ. զի ոչ եքե ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եքե պատրիցիմք իբրեւ զսղայս. այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար փակել եւ 'ի բաց ելանել, ոչ, այժմ, եւ ոչ յայտ, եւ ոչ յաւիտեանս, եւ ոչ յաւիտեանից յաւիտեանս:



ՔԱՁՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆԻ ՃՆՈՒՐ (*)

Ես եւ դուք շատ պատերազմներու մասնակցած ենք. երբեմն քաջաբար յաղթած ենք թշնամւոյն, եւ երբեմն ալ պատահած է որ անոնք յաղթեն մեզի, եւ աւելի յանախ մենք եղած ենք յաղթող: Եւ սակայն, այդ բոլոր պատերազմները մարմնոյ միայն պարծանքն

(*) Խօսուած Արսազու դաշտին վրայ. Եղիշէ:

էին. վասնզի անցաւոր թագաւորի մը հրամանաւը կը կռուէինք: Ով որ փախչէր, ամբողջ աշխարհի առջեւ իբրեւ վատ կը ճանչցուէր եւ անողորմ մահը կ'ըլլար իր բաժինը, իսկ ան որ քաջութեամբ յառաջ կը նետուէր, իբրեւ քաջազն անուն կը ժառանգէր եւ մահկանացու եւ անցաւոր արքայէն մեծամեծ պարգեւներ կ'ստանար: Եւ ահա մեծմէ շատերն իսկ մեր մարմիններուն վրայ վէրքեր եւ սպիներ ունինք եւ շատ յաճախ ալ քաջութեան համար մեծամեծ պարգեւներ ստացած ենք: Ես այդ քաջութիւնները անարգ եւ անօգուտ կը նկատեմ, եւ այդ բազում պարգեւները առ ոչինչ կը համարեմ. վասնզի այդ բոլորը խափանելի բաներ են: Արդ, եթէ մահկանացու հրամանատարի մը համար այդ քաջագործութիւնները կ'ընէինք, որքան եւս առաւել պէտք է արիանանք Միակ Անմահ Թագաւորին համար, որ Տէրն է կենդանեաց եւ մնալոց եւ որ պիտի դատէ բոլոր մարդիկը իրենց գործքերուն համեմատ: Ի հարկէ, որքան ալ խօսք ծերութեան հասնինք, դարձեալ պիտի թողունք այս մարմինը, երթալու Կենդանի Աստուծոյ քով, ուրկէ ալ պիտի չելինք:

Արդ, կ'աղաչեմ ձեզ, ով իմ քաջ նիշակակիցներս, մանաւանդ որ ձեզմէ շատերը քաջութեան մէջ զիս կը գերազանցէք, եւ ըստ հայրենական աւանդութեան աթոռով ալ ինձմէ բարձր էք, բայց, երբ ձեր յօժար կամբովը զիս առաջնորդ եւ զօրագլուխ կարգեցիք ձեր վրայ, թող իմ խօսքերս հեշտ եւ բաղձալի հնչին ձեր ականջներուն, մեծամեծներուն եւ փոքրերուն:

Մի գուցէ հեթանոսաց բանակին բազմութենէն սարսափինք, եւ մահկանացու մարդուն ահաւոր սուրին կռուակ դարձնենք. վասնզի, եթէ Տէրը մեզի յաղթութիւն պարգեւէ, պիտի սատկեցնենք անոնց զօրութիւնը՝ որպէսզի ճշմարտութեան կողմը բարձրանայ, իսկ եթէ մեր կենաց վախճանը եկած հասած է սուրբ մահաւամբը այս պատերազմին, սրտի բերկրանօք ընդունինք զայն, միայն չըլլայ որ մեր քաջութեան վատութիւն խառնենք:

Մանաւանդ որ բնաւ չեմ կրնար մոռնալ այն օրը, ինչպէս ձեզմէ ոմանք եւ ես լաւ կը յիշենք, երբ անօրէն իշխանը խաբեցինք անպիտան տղեկի մը պէս այնու որ առ երեսս իր ամբարիշտ կամբը կատարեցինք, մինչ գաղտնապէս մեր սրտերուն խորը, ինչպէս Տէրը ինքն իսկ կը վկայէ, անբակտելի մնացած էինք իրմէ: Բան մը որ դուք ամէնքդ ալ լաւ գիտէք, այսինքն թէ հնարք մը կը փնտռէինք փրկելու մեզ սիրելիները որ մեծ նեղութեան մէջ էին. որպէսզի անոնց հետ միասնաբար կռուէինք անօրէն իշխանին՝ հետ մեր հայրենիքի աստուածատուր օրինաց համար: Եւ եթէ անոնց չկրցանք օգնութիւն մը հասցնել, այժմ անհնար է որ մարմնաւորին սէրը Աստուծոյ սիրոյն հետ փոխանակենք:

Իսկ արդ, Տէրը երկու երեք կռիւներու մէջ մեզի օգնեց, որով քաջահամբաւ անուն ժառանգեցինք, չարաչար հարուածեցինք արքունական զօրքի եւ մոգերը անողորմ սատկեցուցինք, կռապաշտութեան պղծութիւնը մի քանի վայրերէ մաքրեցինք. որով ա-

նորէն թագաւորի հրամանը եղծելով ապականեցինք,
ծովուն խոռովութիւնը խաղաղեցուցինք, լեռնակու-
տակ ալիքները հանդարտեցան, բարձրադէզ փրփու-
րը սպառեցաւ, եւ զագանային բարկութիւնը դադրե-
ցաւ: Այն որ ամպերուն վրայ կ'որոտար, ընկնուած՝
սովորական բնութենէն աւելի ցածցաւ մեզի հետ խո-
սելով: Ան որ իր հրամանովը կ'ուզէր իր չարու-
թիւնները ի գործ դնել սուրբ եկեղեցիին վրայ այժմ
աղեղով նիգակով եւ սուրով կը կռուի: Ան որ կը
կարծէր թէ մենք Քրիստոնէութիւնը իբր հանդերձ
վրանիս հագած էինք, այժմ, տեսաւ թէ ան մեր
մարմնոյն գոյնն իսկ է, զոր չկրնար փոխել ու թերե-
ւըս յաւիտեան չպիտի կրնայ այլայլել: Վասն-
զի այս կրօնին հիմերը ամրապէս հաստատուած
են Անշարժ Վէմին վրայ, ոչ երկրի վրայ, այլ վերը՝
երկինքը, ուր ոչ անձրեւներ կ'իջնեն, ո՛չ հովեր կը
շնչեն, ո՛չ հեղեղներ կ'ելլեն: Ու մենք թէեւ մարմ-
նով երկրի վրայ ենք եւ սակայն երկնից մէջ է մեր
կառուցուածքը, ուր ոչ ոք կրնայ մերձենալ Քրիստո-
սի անձեռագործ շինուածքին: Հաստատուն կեցէք
մեր ամենափստահելի Զօրագլուխին հաւատքին մէջ,
որ բնաւ չպիտի մոռնայ ձեր այս նահատակութիւ-
նը: Ո՛վ քաջեր, այս հրաշալի բան մըն է որ ահա
այսպէս Աստուած կը կատարէ մեր բնութեան ձեռ-
քով, արարք մը որուն մէջ Աստուծոյ զօրութիւնը մե-
ծապէս կ'երեւի: Վասնզի, եթէ ուրիշներ կոտորելով
մեր անձերուն փառք վաստըկեցանք, եւ մեր ազ-
գատոհմին համար քաջութեան անուն մը յիշատակ

թողուցինք եկեղեցիին, վարձքն ալ Տէրոջմէն սպասե-
լով, որ մեզմէ ամէն մէկուն վերապահած է մեր սըր-
տերուն յօժարակամութեան եւ մեր գործոց յաջո-
գութեան համեմատ, որքան առաւել (փառաց պիտի
անժանանանք) եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մեծ
վկայութեանը համար մեռնինք, բան մը որուն երկ-
նային էակներն անգամ պիտի ցանկային, եթէ կարե-
լի ըլլար: Արովհետեւ այս պարգևը ամէնուն չի արբ-
ուիր, այլ անոր որուն պատրաստուած է Բարերար
Տէրոջմէն. եւ այս պատիւը մեզի եղաւ ոչ թէ մեր
արդար գործքերէն այլ աննախանձ Պարգևատուէն,
ինչպէս Սուրբ Կտակարանին մէջ ալ կ'ըսուի «Հան ուր
մեղքը աւելի շատ եղաւ, հոն ա՛լ աւելի եղաւ Սատու-
ծոյ շնորհքը:»

Եւ այս պատգամը որքա՛ն նշքիւ կը պատշաճի
մեզի. քանի որ մենք մարդոց ամէնէն աւելի ամբա-
րիշտ երեւցանք, այժմ առաւելապէս արդարանանք
մարդոց, հրեշտակաց եւ ամէնուս Հօրը առջև: Վա-
սնզի, այն օրը երբ մարդիկ մեր ամբարիշտ արարքը
լսեցին, շատ արցունք թափեցին սուրբ եկեղեցոյն
մէջ: մանաւանդ եւ մեր սիրելիները: Մեր ընկերներն
ալ սաստիկ զայրացած կ'սպառնային մեզ, եւ կ'ուզէին
մեզ դառն մահուան մը մատնել, ու մեր ծառաներն իսկ
մեզմէ խտրելով կը փախէին: Եւ հեռաւորները որոնք
լսած էին մեր Քրիստոնէութեան մասին, առանց տեղ-
եակ ըլլալու մեր խորհուրդին, անդադրուն ողբերով
զմեզ կ'ողբային եւ առանց գիտնալու մեր մասին
հայհոյալից բաներ կը խօսէին: Եւ ինչ որ ամէնէն

անաւորն է. երկնքի հրեշտակներն իսկ երեսնին մեզմէ
դարձուցած էին, որպէսզի տխուր նայուացքներով
մեզ չնայէին:


Եւ անա հիմա եկած է ժամանակը, մեր անուն-
ներէն ամէն աղտոտութիւն մաքրելու: Այն ատեն,
տխուր սգաւորներու պէս, հոգւով եւ մարմնով տըր-
տում էինք, այսօր երկուքովն ալ զուարթ եւ զգաստ
ենք վասնզի կը տեսնենք որ բարեբարն Աստուած ինք
մեզի հետ է իբր առաջնորդ. մեր զօրավարը մարդ
չէ, այլ նոյն Ինքն Չօրագլուխը բոլոր մարտիրոսնե-
րուն: Վասիւր թերահաւատութեան նշան է. եթէ նախ
թերահաւատութիւնը մեր հոգիներէն վանենք, երկիւղն
ալ պիտի փախչի մեր մտքերէն եւ մեր խորհուրդներէն:



... Անդ երեսնանէլ շատ մեծի սագնապին եւ զաղեսս
անբաւ սարակուսանացն երկոցունց կողմանցն, առ 'ի
յանդուզն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի
բանձրամիտքն յիմարէին եւ վասսաիրսէն լեանէին, քաջ-
քն խիզախէին եւ նահասակքն գոչէին: Եւ խումբ ա-
րարեալ ամենայն բազմութեանն՝ զգեսն 'ի մեզ փակէին,
եւ զանգիտեալ գունդն Պարսից 'ի դժուարութենէ գետնն
զսեղեաւն գեղալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ
անցանէին, ձի 'ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօ-
րութեամբ: Սասկապէս բախեալք ընդ միմեանս, յեր-
կոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ
դիաքաւալ խաղային:

Յայնմ մեծ սագնապի 'ի վեր հայեցաւ քաջն Վար-
դան, եւ տեսնէր զընկիւր ընկիւր քաջ նահասակաց Պար-
սից գօրուն զի զձախակողմն շարժեցին զՀայոց զնդին.
մեծաւ ուժով յարձակէր 'ի տեղին, եւ քաջ քեւն Պարսից
զնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, եւ շոջան առեալ
կոտորէր մինչեւ 'ի նոյն տեղի: Եւ այնպէս շատ սագ-
նապի 'ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մասեան
բախեալ բաժանեցան 'ի մեծամուր պատրասութենէն,
դեռ եւս քաջ քաջ 'ի փախուս դառնային...

Չայն իբրեւ ետես Մուսկան Նիսալաւուրսն, մնայր
գազանացն Արսաւրի, որ 'ի վերայ գազանացն նստէր 'ի
բարձր դիտանոցին եւ կամ իբրեւ յամուր քաղաքին,
եւ 'ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդան ստիպէր,
եւ յառաջամարտիկ զօրօքն զնա 'ի մեզ փակէր: Իսկ
կորովին Վարդան իւրով քաջ նիզակակցօքն ոչ սակաւ
նախնիրս 'ի տեղւոցն գործեաց, յորում տեղւոց եւ ինքն
իսկ արժանի եղաւ առնուլ զկատարեալ նահասակութիւնն:



Եւ այս անուանին են քաջ նահապետացն՝ որ անդէն
 ՚ի տեղւոջն կատարեցան:

Յազգէն մամիկոնէից քաջն Վարդան հաբեւ երե-
 սուն եւ երեմ արամբք,

Յազգէն խորխորունեաց իտէնն կորովի իննեւսան
 արամբք,

Յազգէն պալունեաց արին Արսակ յիսուն եւ երկն
 արամբք,

Յազգէն գնբունեաց զարմանալին Տանաս իննեւսան
 արամբք,

Յազգէն դիմախնէից իմասունն Հմայեակ քան
 եւ երկու արամբք,

Յազգէն քաջբերունեաց հրաւակերն ներսն երկն
 արամբք,

Յազգէն գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք,

Յազգէն ընծայնոց արդարն Արսէն երկն արամբք,

Յազգէն սրուաննայ յառաջադէմն Գարեգին երկու
 հարազատօքն եւ ութուսան արամբք:

Այս երկերիւրուքսուն եւ երկն նահապետք, ընդ նմին
 եւ մեծամեծ նախարարն անդէն ՚ի տեղւոջն կատարե-
 ցան: Եւ յարժունի քանն եւ ՚ի քանն արժունեաց
 եւ յիւրաքանչիւր նախարարաց քանն, բոլ զայս եր-
 կերիւր ուրսուն եւ երկն, եւ այլ եւս երկն հարեւր եւ
 քառասուն այլ, որք զանուանս յիւրաքանչիւր ՚ի զըպր-
 րին կենաց զեղին ՚ի նմին աւուր ՚ի մեծ պատերազմին:
 Եւ միանաւուն լինի ամենայն հազար եւ երեսուն եւ
 վեց:

ԵՂԻՇԷ





Հրատարակուցին
«ԱՍԷՍՏՆԱՆ» Տպագրասան
Գանիբէ

Imp. SAHAG - MESROB
25 Chareh Tewfik, Le Caire, Egypte.

3165

2013

✧ ԳԻՆ ԱԷԿ Ե.Դ. ✧



Հրատարակութիւն
«ԱՍ.ՀԱ.Կ-ՄԵՍՐՈՊ» Տպագրասան
Գանձիւրէ

Imp. SAHAG - MESROB
25 Charoh Tewfik, Le Caire, Egypte.